

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս 3
2. Ամփոփագիր 4
3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ4
4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ5
5. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ.....8
6. Առաջարկություններ12

1. Ներածական մաս

| | |
|--|---|
| Հաշվեքննության հիմքը | ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ. նոյեմբերի 20-ի թիվ 190-Ս որոշման հիման վրա, (հաշվեքննությունը կասեցվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 205-Ս որոշման հիման վրա, և վերսկսվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 248-Ս որոշման հիման վրա) |
| Հաշվեքննության օբյեկտը | Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ |
| Հաշվեքննության առարկան | Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն |
| Հաշվեքննության առարկայի չափանիշները | 2016 թվականի դեկտեմբերի 16-ի 'Գնումների մասին' թիվ ՀՕ-21-Ն ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշում |
| Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը | 2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ: |
| Հաշվեքննության կատարման ժամկետը | 2020թ. նոյեմբերի 27-ից մինչև 2021թ. փետրվարի 22-ը ներառյալ՝ հաշվեքննությունը կասեցվել է 2020թ. դեկտեմբերի 3-ի թիվ 205-Ս որոշմամբ, և վերսկսվել է 2020թ. դեկտեմբերի 25-ի թիվ 248-Ս որոշմամբ: |
| Հաշվեքննության մեթոդաբանությունը | Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն, իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցման, արտաքին հաստատման, վերլուծական, վերահաշվարկի և վերակատարման ընթացակարգեր: |
| Հաշվեքննությունն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում | Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագույանը: |

2. Ամփոփագիր

ՀՀ դատական դեպարտամենտի 2020 թվականի կարիքների համար կազմակերպված թվով 6 գնման ընթացակարգերի հրապարակման ենթակա համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ հրապարակված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների նկատմամբ:

3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ

Հաշվեքննության ընթացքում ստացվել են բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

Էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերված անհամապատասխանությունները համատարած չեն:

Հայտնաբերված անհամապատասխանությունների ցանկ

| Հ/Հ | Ընթացակարգի ծածկագիրը | Ընթացակարգի հայտարարման ամսաթիվը | Անհամապատասխանության նկարագրություն |
|-----|-----------------------|----------------------------------|--|
| 1. | ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/01 | 06/02/2020թ. | 1. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղեկագրում չի հրապարակվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում: 2. Կազմակերպության իրական շահառուների մասին տեղեկատվությունը տեղեկագրում չի հրապարակվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի դրույթին համաձայն: |
| 2. | ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/02 | 10/02/2020թ. | Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը տեղեկագրում չի հրապարակվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն: |
| 3. | ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/03 | 10/02/2020թ. | Կնքված պայմանագրերի մասին հրապարակված հայտարարությունում անգործության ժամկետի սկիզբի ամսաթիվը չի նշվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին համապատասխան |

4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ

ՀՀ դատական դեպարտամենտի համար ՀՀ 2020թ.-ի պետական բյուջեի տարեկան պլանը կազմել է՝ 12,662,335.6 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 12,529,501.1 հազ. դրամ: Ինն ամիսների պլանը կազմել է՝ 8,795,959.1 հազ.դրամ, ճշտված պլանը՝ 8,663,124.59 հազ դրամ, փաստը՝ 7,766,397.1 հազ. դրամ:

2019թ.-ին տարեկան պլանը և ճշտված պլանը կազմել է 12,380,667.6 հազ. դրամ, 2019թ.-ի ինն ամիսների պլանը և ճշտված պլանը՝ 8,400,827.4 հազ.դրամ, փաստը՝ 7,380,075.7 հազ. դրամ: 2020 թվականի ինն ամիսներում 2019թ.-ի համեմատ փաստը պվելացել է 386,321.4 հազ. դրամով կամ 5,2%-ով:

Նշանակալի հաշիվներ են ընտրվել՝ 411100 Աշխատողների աշխատավարձեր և հավելվածարներ, որի մասով ստացված տեղեկատվության համաձայն ինն ամիսների համար փաստացի ծախսը կազմել է՝ 5,889,319.92 հազ.դրամ, 411200 Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ՝ 1,329,065.85, 411300 Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրումներ՝ 348,665.12 հազ.դրամ: Նշված հաշիվներով կատարված վճարումների համապատասխանությունը ՀՀ իրավական ակտերի պահանջներին կիրականացվի տարեկան հաշվեքննության ընթացքում, ընտրանքի միջոցով ըտրված գործերի ուսումնասիրության շրջանակներում:

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն 2020թ. գնումների պլանից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ կազմակերպված թվով 292 գնման ընթացակարգերի շրջանակներում կնքվել է թվով 313 պայմանագիր ընդհանուր 1,349,509.9 հազ. դրամ պայմանագրային արժեքով: Տվյալ պայմանագրերի շրջանակներում կատարողականի ընդհանուր գումարը կազմել է 986,663.2 հազ. դրամ, իսկ վճարված գումարը՝ 851,830.6 հազ. դրամ:

ՀՀ դատական դեպարտամենտ 2020 թվականի 1-ին կիսամյակ

Աղյուսակ 1

| Ծրագիր | | 2020 թ. 1-ին կիսամյակ | 2019 թ. 1-ին կիսամյակ | | |
|------------|---|-----------------------|-----------------------|---------------|-----------------|
| | | Փաստ | Փաստ | Տարբերություն | Տարբերություն % |
| | Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը | 7 766 397,1 | 7 380 075,7 | 386 321,4 | 5,2 |
| 1080-11001 | Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովում և Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատական իշխանության անկախության երաշխավորմանն ուղղված միջոցառումների իրականացում | 1 799 108,38 | 1 731 823,71 | 67 284,67 | 3,9 |

| | | | | | |
|------------|--|--------------|--------------|-----------|------|
| 1080-11002 | ՀՀ Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 490 488,33 | 489 860,77 | 627,56 | 0,1 |
| 1080-11003 | ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 342 968,92 | 329 463,26 | 13 505,66 | 4,1 |
| 1080-11004 | ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 379 217,60 | 379 929,63 | -712,03 | -0,2 |
| 1080-11005 | ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 223 367,85 | 218 461,57 | 4 906,28 | 2,2 |
| 1080-11006 | ՀՀ վարչական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ վարչական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 479 845,47 | 460 956,49 | 18 888,98 | 4,1 |
| 1080-11007 | Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 1 459 436,59 | 1 428 772,61 | 30 663,98 | 2,1 |
| 1080-11008 | ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 169 113,09 | 156 418,69 | 12 694,40 | 8,1 |
| 1080-11009 | ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 292 616,27 | 247 696,18 | 44 920,09 | 18,1 |
| 1080-11010 | ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 231 036,56 | 213 562,67 | 17 473,89 | 8,2 |
| 1080-11011 | ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 251 103,03 | 222 986,37 | 28 116,66 | 12,6 |

| | | | | | |
|------------|--|---|------------|------------|-------|
| 1080-11012 | ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 282 747,58 | 278 349,93 | 4 397,65 | 1,6 |
| 1080-11013 | ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 248 381,72 | 236 792,26 | 11 589,46 | 4,9 |
| 1080-11014 | ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 282 689,21 | 277 651,33 | 5 037,88 | 1,8 |
| 1080-11015 | ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 198 981,18 | 197 587,97 | 1 393,21 | 0,7 |
| 1080-11016 | ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 166 530,94 | 171 748,60 | -5 217,66 | -3,0 |
| 1080-11017 | ՀՀ Սնանկության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Սնանկության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | 273 612,43 | 227 806,27 | 45 806,16 | 20,1 |
| 1080-11018 | Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդի ձևավորում և կառավարում | 14 026,13 | 43 178,72 | -29 152,59 | -67,5 |
| 1080-31001 | Բարձրագույն դատական խորհրդի տեխնիկական հագեցվածության բարելավում | 181 125,82 | 67 028,70 | 114 097,12 | 170,2 |
| 8996-11001 | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | 0 | | 0,00 | |
| 1015-12001 | Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում | 102 461,23 | 95 992,27 | 6 468,96 | 6,7 |
| | 8996-11001 | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | | | |
| 1015 | Սոցիալական փաթեթների ապահովում | | | | |
| | 1015-12001 | Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում | | | |

5. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ

Կազմակերպված գնման ընթացակարգերից թվով 6 գնման ընթացակարգի ուսումնասիրությունից պարզվեց, որ.

1. ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/01 ծածկագրով կազմակերպված ընթացակարգում.

1.1 Գնահատող հանձնաժողովի 13.02.20թ. կայացած և 14.02.20թ. հրապարակված նիստի արձանագրության 10-րդ կետով ըստ համապատասխան չափաբաժինների հայտարարվել են ընտրված մասնակիցները, իսկ 11-րդ կետով հանձնաժողովը որոշել է հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և նշված է, որ այն կցվում է (սակայն այն կցված չէ արձանագրությանը), նույն կետով որոշվել է ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր: Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը կազմված և հրապարակված է 19.02.20թ.: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, հետևաբար այն հրապարակվել է 3 աշխատանքային օր ուշացումով:

1.2 Նշված արձանագրության 2-րդ կետում 1-ին չափաբաժնի համար գնման առարկայի ընդհանուր նախահաշվային գինը 233920-ի փոխարեն նշվել է 23392, նշված հանգամանքի ճշգրտումով պայմանավորված տեղեկագրում 27.02.20թ.-ին հրապարակվել են գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության և չկայացած ընթացակարգի մասին հայտարարության «լրամշակված» մակնշմամբ տարբերակները, սակայն հրապարակված տարբերակներում կցվել են սկզբնական՝ չփոփոխված փաստաթղթերը:

1.3 Մասնակցի կողմից ներկայացված կազմակերպության իրական շահառուների մասին տեղեկատվությունը հրապարակվել է 14.02.20թ., ինչը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի պահանջին, մասնավորապես, այն պետք է հրապարակվեր պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ՝ 19.02.2020 թ.-ին:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Վերոնշյալի կապակցությամբ տեղեկացվել է, որ գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության տեխնիկական վրիպակներից շտկված (այդ թվում՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը) և լրամշակված

տարբերակն այժմ հրապարակված է www.gnumner.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում:

Ինչ վերաբերում է ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/01 ծածկագրով կազմակերպված ընթացակարգի շրջանակում հրապարակման ենթակա փաստաթղթերը 1 և 3 աշխատանքային օր ուշացումով հրապարակելուն, ապա հայտնում ենք, որ դրանք չեն հանգեցրել գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխմանը, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարմանը:

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն գնումների գործընթացում հնարավոր գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխման, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ընթացակարգային գործընթացի իրականացման նկատմամբ, իսկ գործընացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ:

2. ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/02 ծածկագրով կազմակերպված ընթացակարգում՝ ընտրված մասնակիցների հետ պայմանագրերը կնքվել են 03.03.20թ., իսկ կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է 05.03.20թ.: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է կնքված պայմանագրի մասին հայտարարություն ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը, ուստի այն հրապարակվել է 1 աշխատանքային օր ուշացումով:

Հաշվեքննության օրյեկտի բացատրություն.

Թեև ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/02 ծածկագրով կազմակերպված ընթացակարգի շրջանակում կնքված պայմանագրի մասին հայտարարությունը 1 աշխատանքային օր ուշացումով է հրապարակվել, այդուհանդերձ, այն չի հանգեցրել և չէր կարող հանգեցնել գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխմանը, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարմանը:

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն գնումների գործընթացում հնարավոր գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխման, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ընթացակարգային գործընթացի

իրականացման նկատմամբ, իսկ գործընացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ:

3. ԴԴ-ԳՀԾՁԲ-20/01 ծածկագրով իրականացված ընթացակարգում՝ 03.04.20թ. հրապարակված կնքված պայմանագրի մասին հայտարարության մեջ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած գինը բաժնի 4-րդ չափաբաժնի մասում բոլոր մասնակիցների ընդհանուր գինը ներկայացվել է ԱԱՀ-ի հաշվարկը ներառված, սակայն պայմանագիր կնքելու որոշման մեջ նշված է, որ «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն, «Կարհագառ» ՍՊԸ-ն, «Սամավտո» ՍՊԸ-ն և «Օվնե» ՍՊԸ-ն չեն հանդիսանում ԱԱՀ վճարող, ինչպես նաև նույն չափաբաժնի մասում ԱԱՀ-ի սյունակում նշված ընկերությունների մասով գումար չի նշվել:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Թեև ԴԴ-ԳՀԾՁԲ-20/01 ծածկագրով կնքված պայմանագրի մասին հայտարարության բովանդակությունում արձանագրված անհամապատասխանությունները գնման ընթացակարգի, դրա արդյունքների փոփոխմանը, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարմանը չհանգեցնող տեխնիկական վրիպակներ են, այդուհանդերձ, կնքված պայմանագրի մասին հայտարարության լրամշակված տարբերակն այժմ հրապարակված է www.gnumner.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում:

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն գնումների գործընթացում հնարավոր գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխման, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ընթացակարգային գործընթացի իրականացման նկատմամբ, իսկ գործընացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ:

4. ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/03 ծածկագրով կազմակերպված ընթացակարգում՝ կնքված պայմանագրերի մասին հայտարարությունը հրապարակվել է 02.03.2020թ., սակայն կնքված պայմանագրերի մասին հայտարարությունում անգործության ժամկետի սկիզբը նշված է 19.02.2020թ.,՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է, ուստի պետք է նշվել 20.02.2020թ.:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Վերը նշվածի կապակցությամբ ընդգծվել է, որ ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/03 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում անգործության ժամկետին վերաբերող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներն ամբողջությամբ պահպանված են (անգործության հնգօրյա ժամկետի հաշվարկի սկիզբ՝ 20.02.2020թ., ավարտ՝ 24.02.2020թ.), իսկ կնքված պայմանագրի մասին հայտարարության մեջ անգործության ժամկետի սկիզբը 20.02.2020 թվականի փոխարեն 19.02.2020 թվականի նշումը պարզապես տեխնիկական վրիպակ է:

Ամփոփելով արձանագրված դիտարկումները և համադրելով ներկայացված առարկությունների և պարզաբանումների հետ՝ նշվել է, որ դրանք տեխնիկական բնույթի են, ընդ որում, արձանագրված անհամապատասխանությունները որևէ կերպ չեն հանգեցրել գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխմանը, այդ թվում՝ շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարմանը: Դրանից բացի, կազմված արձանագրության հիման վրա արդեն իսկ կատարված են համապատասխան շտկումները:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտի կողմից կձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ հետագայում նմանատիպ տեխնիկական վրիպակներ թույլ չտալու ուղղությամբ:

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն գնումների գործընթացում հնարավոր գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխման, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ընթացակարգային գործընթացի իրականացման նկատմամբ, իսկ գործընացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ:

6.ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ դատական դեպարտամենտին առաջարկվում է ձեռնարկել միջոցներ՝ գնումների գործընացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ: